



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ

15.04.2021թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 10 անդամները:

Բացակայում են Ն.Վարդանյանը, Մ.Գասպարյանը, Հ.Գրիգորյանը,
Ն.Բաբայանը, Ս.Վարդանյանը:

Նիստը վարում է համայնքի ղեկավար Հ.Շահգալոյանը:

Համայնքի ղեկավար Հ.Շահգալոյանի հրավերով ավագանու նիստին մասնակցում են **համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Ա. Ծերունյանը, Ա.Զաքարյանը, Գ.Աֆյանը և գյուղերի վարչական ղեկավարները:**

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Հաստատել համայնքի ավագանու թիվ 3 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի 2021 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:
2. Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 56-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
3. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
4. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվությամբ եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:
5. Չարենցավան համայնքի տարածքում աղբամանների տեղադրման վայրերը սահմանելու մասին:
6. Քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող ք.Չարենցավան 10-րդ թաղամաս 2-րդ փողոց թիվ 1 հասցեում գտնվող բնակելի տան ավել զբաղեցրած հողատարածքն ուղղակի վաճառքով օտարելու մասին:
7. Սեփականության իրավունքով «ԼԻԶԻՆ» ԲԲԸ-ին պատկանող հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:
8. Եփականության իրավունքով Արսեն Խլիլաթյանին պատկանող հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:

9. Ըստ օրենքի ժառանգության քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող ք.Չարենցավան Այգեստան թաղամաս 1-ին փողոց 4-րդ փակուղի թիվ 12 հասցեում գտնվող բնակելի տան ավել զբաղեցրած հողատարածքն ուղղակի վաճառքով օտարելու մասին:
10. Չարենցավան համայնքի արտադարոցական և նախադարոցական կրթություն իրականացնող ՀՈԱԿ-ների սաների համար ծնողական վարձավճարների զեղչեր սահմանելու մասին:
11. Աղբահանության վարձավճարի զեղչեր սահմանելու մասին:
12. Չարենցավան համայնքում իրավական հսկողության արդյունքում բացահայտված թերությունների և դրանց վերացման ուղղությամբ տարված աշխատանքների մասին:
13. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքը աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:
14. Քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող Երիտասարդության փողոց թիվ 3 հասցեում գտնվող ավտոտնակի զբաղեցրած հողատարածքն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -10

դեմ - 0

ձեռնպահ -0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. Չարենցավան համայնքի 2021 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի եկամուտների և ծախսերի կապարողականի հաղորդման մասին:

/Ձեկ. Գ.Աֆյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի՝**առաջարկում եմ**, ի գիտություն ընդունել Չարենցավան համայնքի 2021 թվականի 1-ին եռամսյակի բյուջեի կատարման մասին հաղորդումը: